



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

1st March 2020

Bulletin 09/2020

Second Sunday of Great Lent—Expulsion

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՈՌՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 12:1-13:10

Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ կարեկցութեամբ, որ ձեր մարմինները ներկայացնէք որպէս ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը: Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է: Քանի որ ինծի տրուած շնորհքով կ'ըսեմ ձեզմէ ամէն մէկուն, որ իր մասին աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեամբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ որ Աստուած բաշխած է իւրաքանչիւրին: Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ այդ բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, նոյնպէս մենք՝ շատ ըլլալով մէկ մարմին ենք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն է՝ մարգարէանա՛նք հաւատքին համեմատութեամբ, եթէ սպասարկութիւն՝ սպասարկե՛նք. ա՛ն որ կը սորվեցնէ՝ թող յարատեւ սորվեցնելով, ա՛ն որ կը յորդորէ՝ յորդորելով. ա՛ն որ կը բաշխէ՝ թող յարատեւ պարգամտութեամբ, ա՛ն որ կը վերակացու է՝ փութաջանութեամբ, ա՛ն որ կ'ողորմի՝ ուրախութեամբ: Մէրը թող ըլլայ առանց կեղծիքի. չարէն զգուցե՛ք, բարիին՝ յարեցե՛ք: Իրարու հանդէպ գորովալի՛ց եղէ՛ք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ զիրա՛ր գերադասեցե՛ք: Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով Տէրոջ ծառայեցե՛ք: Յոյսով ուրախացե՛ք. տառապանքի մէջ համբերեցե՛ք. աղօթքի մէջ յարատեւեցե՛ք: Սուրբերու կարիքներուն հաղորդակի՛ց եղէ՛ք. հիւրասիրութեան հետամուտ եղէ՛ք: Ձեզ հալածողները օրհնեցե՛ք. օրհնեցե՛ք եւ մի՛ անիծէ՛ք: Ուրախացողներուն հետ ուրախացե՛ք, ու լացողներուն հետ լացե՛ք: Իրարու հանդէպ միեւնոյն մտածումը ունեցե՛ք: Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցե՛ք դէպի նուաստները. դուք ձեզ իմաստուն մի՛ սեպէք: Չարիքի փոխարէն չարիք մի՛ հատուցանեցե՛ք ռեւէ մէկուն. մտադրեցե՛ք ընել ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ: Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութիւն պահեցե՛ք ամէն մարդու հետ: Սիրելիներ, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան. որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՛նչ է, ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը»: Ուրեմն «եթէ քու թշնամիդ անօթեցած է՝ սնուցանէ՛ զայն, ու եթէ ծարաւցած է՝ խմցո՛ւր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի կայծեր պիտի կուտակես անոր գուլիսին վրայ»: Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չարին:

Ամէն անձ թող հպատակի իր վրայ եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ: Հետեւաբար ո՛վ որ կ'ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը դիմադրեն՝ իրենք զիրենք կը

INVITATION

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to support our church by becoming a registered member.

Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices.

Please collect your Registration Form from Council members at the Church Entrance or from our website www.styeghiche.org.uk

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

դատապարտեն»: Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար վախ չեն ազդեր, հապա՝ չար գործերու: Ուստի կ'ուզե՛ս չվախնալ իշխանութենէն. բարի՛ն գործէ, եւ գովեստ պիտի ընդունիս անկէ: Որովհետեւ ան Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարի՛ն գործես. բայց եթէ չար՝ գործես՝ վախցի՛ր, քանի որ զուր տեղը չէ որ սուր կը կրէ մէջքը. որովհետեւ Աստուծոյ սպասարկուն է, եւ վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ՝ որ չարիք կը գործէ: Ուստի հարկ է հպատակիլ. ո՛չ միայն բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի համար: Այս պատճառով է որ տուրք ալ կը վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաներն են՝ բուն այս բանին յատկացուած: Ուրեմն հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք. որո՛ն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ն որ մաքս՝ մաքսը, որո՛ն որ վախ՝ վախը, որո՛ն որ պատիւ՝ պատիւը: Ո՛չ մէկ պարսք ունեցէք ռեւէ մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը: Արդարեւ այն քսուածը. «Շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ կայ ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Միրէ՛ ընկերդ քու անձիդ՝ պէս»: Սերը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը:

The Epistle of St Paul to the Romans 12:1-13:10;

I beseech you therefore, brethren, by the mercies of God, that ye present your bodies a living sacrifice, holy, acceptable unto God, which is your reasonable service. And be not conformed to this world: but be ye transformed by the renewing of your mind, that ye may prove what is that good, and acceptable, and perfect, will of God. For I say, through the grace given unto me, to every man that is among you, not to think of himself more highly than he ought to think; but to think soberly, according as God hath dealt to every man the measure of faith. For as we have many members in one body, and all members have not the same office: So we, being many, are one body in Christ, and every one members one of another. Having then gifts differing according to the grace that is given to us, whether prophecy, let us prophesy according to the proportion of faith; Or ministry, let us wait on our ministering: or he that teacheth, on teaching; Or he that exhorteth, on exhortation: he that giveth, let him do it with simplicity; he that ruleth, with diligence; he that sheweth mercy, with cheerfulness. Let love be without dissimulation. Abhor that which is evil; cleave to that which is good. Be kindly affectioned one to another with brotherly love; in honour preferring one another; Not slothful in business; fervent in spirit; serving the Lord; 12 Rejoicing in hope; patient in tribulation; continuing instant in prayer; Distributing to the necessity of saints; given to hospitality. Bless them which persecute you: bless, and curse not. Rejoice with them that do rejoice, and weep with them that weep. Be of the same mind one toward another. Mind not high things, but condescend to men of low estate. Be not wise in your own conceits. Recompense to no man evil for evil. Provide things honest in the sight of all men. If it be possible, as much as lieth in you, live peaceably with all men. Dearly beloved, avenge not yourselves, but rather give place unto wrath: for it is written, Vengeance is mine; I will repay, saith the Lord. Therefore if thine enemy hunger, feed him; if he thirst, give him drink: for in so doing thou shalt heap coals of fire on his head. Be not overcome of evil, but overcome evil with good.

Let every soul be subject unto the higher powers. For there is no power but of God: the powers that be are ordained of God. Whosoever therefore resisteth the power, resisteth the ordinance of God: and they that resist shall receive to themselves damnation. For rulers are not a terror to good works, but to the evil. Wilt thou then not be afraid of the power? do that which is good, and thou shalt have praise of the same: For he is the minister of God to thee for good. But if thou do that which is evil, be afraid; for he beareth not the sword in vain: for he is the minister of God, a revenger to execute wrath upon him that doeth evil. Wherefore ye must needs be subject, not only for wrath, but also for conscience sake. For for this cause pay ye tribute also: for they are God's ministers, attending continually upon this very thing. Render therefore to all their dues: tribute to whom tribute is due; custom to whom custom; fear to whom fear; honour to whom honour. Owe no man any thing, but to love one another: for he that loveth another hath fulfilled the law. For this, Thou shalt not commit adultery, Thou shalt not kill, Thou shalt not steal, Thou shalt not bear false witness, Thou shalt not covet; and if there be any other commandment, it is briefly comprehended in this saying, namely, Thou shalt love thy neighbour as thyself. Love worketh no ill to his neighbour: therefore love is the fulfilling of the law.

ՅԻՍՈՒՄ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5:17-48 ՈՒՍՈՒՑՈՒՄ ՕՐԵՆՔԻ ՇՈՒՐՉ

«Մի՛ կարծէք թէ եկայ՝ արելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ թէ արելու, հապա՝ գործադրելու: Որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին”: Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պատուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ: Որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ձեր արդարութիւնը չզերագանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը”»:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ

“Մի՛ սպաններ”։ Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի ըլլայ դատաստանի։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ զուր տեղը բարկանայ իր եղբոր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի։ Ո՛վ որ “սպուշ” ըսէ իր եղբոր՝ արժանի պիտի ըլլայ ատենի դատապարտութեան։ Ո՛վ որ “յիմար” ըսէ իր եղբոր՝ արժանի պիտի ըլլայ գեհե՛նի կրակին”։ Ուրեմն եթէ քու ընծադ զոհասեղանին վրայ բերես, ու հոն յիշես թէ եղբայրդ բա՛ն մը ունի քեզի դէմ, հո՛ն ձգէ ընծադ՝ զոհասեղանին առջեւ. նա՛խ գնա՛ հաշտուէ՛ եղբորդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծադ։ Շուտով համաձայնէ քու ոտխիդ հետ, մինչ ճամբան ես անոր հետ, որպէսզի հակառակորդդ ջանձնէ քեզ դատաւորին, ու դատաւորը՝ ոտխկանին, եւ բանտը չնետուիս։ Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին նաքարակիրը”»։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ՇՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Շնութիւն մի՛ ըներ”։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր ցանկալու համար, արդէ՛ն անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր հետ”։ Ուստի եթէ աջ աչքդ կը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեհե՛նը։ Եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, ու ամբողջ մարմինդ չնետուի գեհե՛նը»։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՊԱՀԱՐՉԱՆԻ ՄԱՍԻՆ (Մատթ. 19:9, Մարկ. 10:11-12, Ղուկ. 16:18)

«Նաեւ ըսուեցաւ. “Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ անոր ամուսնալուծումի վկայագիր մը”։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կ’արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի, ի՛նք շնութիւն ընել կու տայ անոր, եւ ո՛վ որ կ’ամուսնանայ արձակուածին հետ՝ շնութիւն կ’ընէ”»։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՐԴՈՒՄԻ ՇՈՒՐՁ

«Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. “Սուտ երդում մի՛ ըներ, հապա հատուցանէ՛ Տէրոջ ըրած երդումներդ”։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Երբե՛ք երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, ո՛չ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մէ՛կ մազ ճերմկցնել կամ սեւցնել։ Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այո՛ւն այո՛ւ, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարէն”»։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ՎՐԷԺԻ ՇՈՒՐՁ (Ղուկ. 6:29-30)

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ”։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Չարին մի՛ դիմադրեր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր անոր միւսն ալ։ Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ։ Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն։ Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ’ուզէ փոխ առնել քեզմէ”»։

ԹՇՆԱՍԻՆԵՐԸ ՍԻՐԵԼ (Ղուկ. 6:27-28,32-36)

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Միրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ”։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ’ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ, որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ։ Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ի՞նչ վարձատրութիւն կ’ունենաք. մաքսաւորներն ալ նոյնը չե՛ն ըներ։ Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՞նչ աւելի կ’ընէք ուրիշներէն. մաքսաւորներն ալ նոյնը չե՛ն ըներ։ Ուրեմն դուք կատարեալ՝ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է”»։

The Holy Gospel of Jesus Christ according Mathew 5:17-48;

Think not that I am come to undo the law or the prophets; I am not come to undo, but to fulfil. For verily I say unto you, Until heaven and earth pass away, not one jot or one tittle shall pass from the law until all is fulfilled. Whosoever therefore shall undo one of these least commandments and shall teach men so, he shall be called the least in the kingdom of the heavens; but whosoever shall do and teach *them*, the same shall be called great in the kingdom of the heavens. For I say unto you, That except your righteousness shall exceed *the righteousness* of the scribes and Pharisees, ye shall in no case enter into the kingdom of the heavens. Ye have heard that it was said to the ancients, Thou shalt not commit murder, and whosoever shall commit murder shall be guilty of the judgment; but I say unto you, That whosoever is angry with his brother out of control shall be in danger of the judgment, and whosoever shall insult his brother shall be in danger of the council, but whosoever shall say, Thou art impious, shall be in danger of hell. Therefore if thou bring thy gift to the altar, and there remember that thy brother has something against thee; leave thy gift there before the altar, and go; first restore friendship with thy brother, and then come and offer thy gift. Conciliate with thine adversary quickly, whiles thou art in the way with him; lest at any time the adversary deliver thee to the judge, and the judge deliver thee to the officer, and thou be cast into prison. Verily I say unto thee, Thou shalt by no means come out of there, until thou hast paid the uttermost farthing. Ye have heard that it was said to the ancients, Thou shalt not commit adultery; but I say unto you, That whosoever looks on a woman to lust after her has committed adultery with her already in his heart. Therefore if thy right eye should bring thee occasion to stumble, pluck it out and cast *it* from thee; for it is better for thee that one of thy members should perish, and not *that* thy whole body should be cast into hell. And if thy right hand should bring thee occasion to stumble, cut it off, and cast *it* from thee: for it is better for thee that one of thy

members should perish, and not *that* thy whole body should be cast into hell. It was also said, Whosoever shall put away his wife, let him give her a bill of divorce; but I say unto you, That whosoever shall put away his wife, except for the cause of fornication, causes her to commit adultery; and whosoever shall marry her that is divorced commits adultery. Again, ye have heard that it was said to the ancients, Thou shalt not perjure thyself, but shalt perform unto the Lord thine oaths; but I say unto you, Swear not at all; neither by the heaven, for it is God's throne, nor by the earth, for it is his footstool, neither by Jerusalem, for it is the city of the great King. Neither shalt thou swear by thy head because thou canst not make one hair white or black. But let your communication be, Yes, yes; No, no; for whatsoever is more than this comes of evil. Ye have heard that it was said, An eye for an eye, and a tooth for a tooth; but I say unto you, That ye resist not with evil, but whosoever shall smite thee on thy right cheek, turn to him the other also. And if anyone desires to sue thee at the law, and take away thy clothing, let him have *thy* cloak also. And whosoever shall compel thee to go a mile, go with him two. Give to him that asks *of* thee, and from him that would borrow of thee turn not thou away. Ye have heard that it was said, Thou shalt love thy neighbour, and hate thine enemy. But I say unto you, Love your enemies, bless those that curse you, do good to those that hate you, and pray for those who speak evil about you, and persecute you; that ye may be sons of your Father who is in the heavens, for he makes his sun to rise on the evil and on the good and sends rain on the just and on the unjust. For if ye love those who love you, what reward shall ye have? Do not even the publicans the same? And if ye embrace your brethren only, what do ye more *than others*? Do not even the publicans so? Be ye therefore perfect, even as your Father who is in the heavens is perfect.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Մի՛ կերպարանուէք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ որպէսզի դուք քննէք լաւ, եւ թէ ինչ է Աստու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը» (Հռոմ. 12.2):

Այաշխարութեան ճանապարհ քայլող սիրելի եղբայրներ՝ եւ քոյրեր,

Նկատել էք, թէ ինչպէս են միմեանց հետ երկար ժամանակ ապրող, աշխատող կամ սովորող մարդիկ յաճախ ազդում մէկը միւսի վրայ: Ամուսիններ կան, որ այնքան են նմանում իրար, որ կարծես քոյր եւ եղբայր լինեն: Մենք բոլորս փոխադարձաբար ազդում ենք միմեանց վրայ, ոգևորում, ուրախացնում կամ տխրեցնում իրար: Այս աշխարհն էլ է ազդում մեզ վրայ իր խոսքով, պատկերներով, մտածողութեամբ, կենսակերպով: Թատրոնի կամ շարժանկարի մի հերոսը կարող է ներշնչող կամ իր կերպարով նոյնիսկ յեղափոխող լինել մի ամբողջ սերունդի համար, որ ձգտում է նմանուել իր սիրած հերոսին ամէն ինչով՝ հագուստով, կերպարանքով, շարժումներով:

Կարող ենք իբրեւ մեզ ուղղուած հարց ընդունել Աւետարանի խօսքը, որ կարող է հնչել այսպէս՝ իսկ ո՞վ է քո՞ հերոսը, ո՞ւմ ես դո՞ւ նմանուել ուզում խօսքով, գործով, կերպարանքով, կեանքով: Ո՞վ է հերոս քո, քո գավակի, քո ընտանիքի համար...

Մենք ապրում ենք մի աշխարհում, ուր կենցաղն աստիճանաբար դառնում է Աստու եւ Սուրբ Գրքին հակառակուող, ստոր եւ ցածր ապրումներ գովազդող, հոգեւոր եւ բարոյական բարձունքից ցած գլորող: Մրանք նմանում են աշխարհում պարբերաբար յայտնուող զանազան վարակների: Իսկ այս վարակը մեզ է փոխանցում մարմնապաշտ եւ հոգուն թշնամի գաղափարախօսութիւնների, գրքերի, ֆիլմերի, մարդկանց միջոցով:

Հոգևորապէս անկայուն, անտեղեակ, որով նաեւ՝ անպաշտպան մարդը խոցելի է նման ցանկացած վարակի նկատմամբ: Այդպէս եղաւ դրախտաբնակ առաջին զոյգի հետ, որ թունաւոր վարակն ընդունեց խօսքի միջոցով, խօսք, որ Աստու նկատմամբ կասկած, անվստահութիւն բերեց: Լսածը միտք դարձաւ, միտքը արարք, իսկ արարքը հետեւանք ունի, որի համար պատասխանատու պիտի լինի մարդ՝ վաղ թէ ուշ: Քրիստոս Լերան քարոզի մէջ ասում է. **«Եղի՛ր իրաւախոհ կանխաւ. գուցէ նա քեզ դատաւորին յանձնի, եւ դատաւորը՝ դահճին, ու դու բանտ նետուես: Ծշմարիտ եմ ասում քեզ, այնտեղից դուրս չես գայ, մինչեւ չվճարես վերջին դահեկանը»** (Մատթ. 5.25-26): Արդիւնքը եղաւ Կենաց Ծառից զրկուելը, մահ ժառանգելը, վտարումն ու արտաքսումը Եդէմի պարտեզից: Առաջին մարդը դեռ փորձառութիւն չունէր չարին ճանաչելու, իմանալու, որ հնարաւոր եւ կարելի չէ բանակցել Աստու եւ մեր փրկութեան թշնամու հետ:

Առաջին մարդը շարունակուում է մեր մէջ, եւ, ցաւօք, իր սխալն էլ է շարունակուում մեր մէջ: Մեր մէջ իր արտաքսումն է շարունակուում, երբ մենք շարունակուում ենք ականջ դնել «աշխարհի իշխանի» ձայնին, ճաշակել «արգելուած պտուղներ», որոնցից շատերը բանտ են դառնում մեզ համար, շատերի հետեւանքն էլ մահն է՝ հոգեւոր, բարոյական ու ֆիզիկական: Որքա՞ն պատանիներ ու երիտասարդներ են զոհ գնում սանձարձակ կրքերին, սեռային ու բարոյական պղծութիւններին, այլոհոյային ու թմրանիւթային «համաճարակներին»՝ բանտ կարծելով իրենց սիրողների խնամքն ու դաստիարակութիւնը եւ խաբուելով կեղծ ազատութեան պատրանքներով: Յիշի՛ր, որ Աստուած, քո առջեւ դնելով իր օրէնքը, ազատութիւն է տալիս քեզ՝ անելու ինչպէս ուզում ես, իսկ սատանան ասում է, թէ չկան օրէնքներ, բայց խլում է քեզանից քո ազատութիւնը: Պէտք չէ բանակցել խաբող եւ բանսարկու օձի հետ, այսկզբից եւեթ մերժել իրեն ու իր առաջարկը. սա այն թշնամին է, որ երբեք չի զիջում եւ չի հաշտուում:

Խաբուելով եւ բանակցելով սկսում ենք մեր ժամանակը Աստծուն նուիրելու փոխարէն տալ հակառակորդի քարոզչութեանը, ուր ծաղրուում է իրական ազատութիւնը եւ գովազդուում են մոլութիւնները: Մենք պէտք է զգանք, որ իր հետ վռնդուել, արտաքսուել են երանութեան դրախտից, որ այնտեղ վերադառնալու երազանքը, ցանկութիւնը մեր մէջ զօրացնի Աստծոյ սէրն ու դէպի Նա վերադարձը:

Յաւալի է արձանագրել, որ այսօրուայ մարդը, **«կերպարանուելով այս աշխարհի կերպարանը»**, խճճուելով բազմաթիւ կեղծ գովազդներից, երջանկութեան փնտրտուքով ինքն է հեռանում երջանկութեան Աղբիւրից, իրեն կամաւորաբար տալիս է մոլութիւնների գերութեանը՝ ունենալով գերութիւնից ազատագրող Քրիստոսին: Մենք մեր ձեռքերով ենք կռում մեր գերութեան շղթաները՝ ահռելի ժամեր տալով մեզ հիւժող զբաղմունքներին: Իւրաքանչիւր մէկը գիտի, թէ որոնք են իրեն կապող շղթաները, ի՞ր մոլութիւնները, ի՞ր գայթակղութեան քարերը, ի՞ր արգելուած պտուղները:

Մեծ Պահքի սկզբում փակուում է եկեղեցու խորանի վարագոյրը, որ յիշեցումն է արդեն մեղաւոր մարդու առջեւ դրախտի փակուելը: Հնում փակուում էին եկեղեցու դռները եւ ամբողջ քառասնորդական Պահքի շրջանում մարդիկ չէին մտնում եկեղեցի՝ արարողութիւններին հետեւելով գաւիթից: Միայն Ծաղկազարդին՝ Դռնբացեքի խորհրդաւոր արարողութեան ընթացքում էր, որ «Բաց մեզ, Տէր» երգ-խնդրանքով ենք դիմում Տիրոջը, որ մեր առջեւ բացուեն Աստծոյ արքայութեան՝ եկեղեցու դռները, քանի որ եկեղեցին խորհրդաբանօրէն երկինքն է երկրի վրայ եւ մենք Քրիստոսով հնարաւորութիւն ենք ունենում կրկին դրախտաբնակ դառնալու:

Միրելիներ, Ադամն ու Եւան չէին պատժուի, չէին վտարուի դրախտից, եթէ իրենց սխալն ընդունէին, չնեղադրէին ուրիշի, սրտանց զոջումով ու ափսոսանքով «ներողութիւն», «մեղավոր ենք» ասէին: Մեծ Պահքը մեր մեղաւոր լինելու գիտակցութիւնն է, մեր սուգն է մեր հոգեւոր մահուան համար, մեր տրտմութիւնն է մեր ընկած, վտարուած ու վռնդուած լինելու համար: Մեծ Պահքը նաեւ մեր «ներողութիւն» ու «մեղավոր եմ, զոջում եմ» ասելն է Աստծուն եւ մարդկանց մեր սխալ ու մեղաւոր մտքերի, խօսքերի ու գործերի համար: Մեծ Պահքը մեր «կանգ առ»-ն է աշխարհի խելայեղ վազքին, այն մեր վերադարձի կանչն է դէպի Աստծոյ սիրոյ պարտեզ:

Ուրեմն, ի՞նչ է անհրաժեշտ մեզ անել Մեծ Պահքին, որպէսզի իրապէս արտաքսոււմք վերջնական չլինի, այլ Քրիստոսով «Եկայք առ իս» կանչով վերադարձը կատարեալ լինի.

1. Սովորութիւն դարձնել ամէն օր կարդալ Սուրբ Գիրքը, աւելացնել մեր գիտելիքը Աստծոյ, Իր սիրոյ եւ Իր փրկութեան ծրագրի մասին՝ դրանով նաեւ ճանաչելու հնար ունենալ այդ ամենին հակառակ եւ թշնամի գործութեանը, չխաբուել եւ չընդունել նրա առաջարկները:
2. Մաղմոսներով, հոգեւոր մաղթաքներով եւ եկեղեցու սուրբ հայրերի աղօթքներով կազմել սեփական աղօթական օրակարգ՝ ամէն օր աղօթելով առաւօտեան ու երեկոյեան, յիշելով իւրայիններին եւ օտարներին:
3. Ողորմութեամբ եւ բարի, առաքինի գործերով լցնել ամէն օրը՝ այցելելով հիւանդ, ծեր կամ միայնակ մարդկանց, կերակուր եւ հագուստ բաժանելով կարիքաւորներին, հասնելու մեր օգնութեանը կարող մարդկանց:
4. Պահել անձը կերուիտումներից, տարբեր զուարճութիւններից եւ համացանցին (internet) երկար ժամեր տալուց, ոչ միայն չուտել մարմինը պարարտացնող կերակուրներ, այլ նաեւ ուղղակի քիչ ուտել՝ մարմնին տալով ամենակենսական կարելորդութեան սնունդը:
5. Տնտեսուած դրամը ողորմութեան համար գործածել, իսկ տնտեսուած ժամանակը՝ հոգեւոր նիւթեր կարդալու եւ լսելու համար:
6. Չգայարանների պահեցողութեան ձգտել՝ զսպելով լեզուն այլ մարդկանց քննելուց ու բամբասելուց, եւ աչքը, լսելիքը, շոշափելիքը պահել դէպի մեղք տանող քայլերից:

Մեծ Պահքը մարդու ինքնաքննութեան շրջան է, ներամփոփ մի շրջան, որը մարդու համար առիթ է ինքնամաքման, կարելոր միջոց՝ տարեկան մեր հոգեւոր տասանորդը Աստծուն տալու համար: Ապաշխարութեան ճշմարիտ պտուղն այն է, որ մենք սովորում ենք խոնարհութեան արքունի ճանապարհը, երբ յոյսը մեզ վրայ դնելու փոխարէն ապաւինում ենք Աստծուն: **«Նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբ որպէսզի դուք քննեք լաւը, եւ թէ ի՞նչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը»** (Հռոմ. 12.2): **«Մտքի նորոգութիւն»** սահմանումն է հենց բնութագրում, թէ ինչ է ապաշխարութիւնը, թէ ինչ պիտի ունենանք արդիւնքում: Պահքը մաքրում է միտքը, սրում հոգեւոր ուշադրութիւնը, առաւել քաղցր եւ ցանկալի դարձնում Աստծոյ հետ հաղորդակցումը: Ներքին մաքրութեանն ուշադրութիւն դարձնելուց է ծնւում մտքի, լեզուի, մարմնի մաքուր՝ սուրբ լինելը:

Պահքի եւ ծոմի համար մարդը ճիգ եւ ջանք է գործադրում՝ զսպելով իրեն, ինքնագոհողութեան քայլ անելով եւ ձգտելով այդ կերպ Քրիստոսի մեծ գոհողութեանը պատասխանել: Այն Աստծուն պատշտելու, Աստծոյ նկատմամբ մեր հոգեւոր ապրումի իրական արտայայտութիւն է. **«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, ողորմութեամբ Աստծու, որ պատրաստեք ձեր մարմինները որպէս զոհ կենդանի, սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը»** (Հռոմ. 12.1):

Թող Տէրը օգնական եւ առաջնորդ լինի ամենքիս՝ Աստծուն հաճելի պահեցողութեամբ անելու հաւատքի եւ աղօթքի կեանքում, Քրիստոսին հաւատարիմ լինելու մեր դարի խառնարանում եւ մնալու այն տապան-եկեղեցու մէջ, որի Նաւապետը Աստուած ինքն է, Ում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է նաև Արտաքսման: Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. «...Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էր»: (Ծննդ. 3:23): Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբերայական խոսքերին, պատվիրանագանց գտնվելով՝ համտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր և հող կդառնաս» (Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, զղջում, ապաշխարանք: Մա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: “So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed” (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn’t die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God said to the human being: “You were made from soil and you will become soil again” (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great lent such names and mysteries which symbolize the mankind’s way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her lifer so that the period of great Lent should be fruitful and productive.



ՄԻԶԻՆՔԻ Ճաշկերոյթ

St Yeghiche Armenian Church Parish Ladies Guild

Under the auspices of HG Bishop Hovakim Manukyan
invite you for

GREAT MID LENTEN LUNCHEON

at Navasartian Centre, 223 Northfields Ave, London W13 9QU
on Wednesday 18th March 2020 starting from 11:00 to 3:00 pm.

All Members of the family are welcomed
Support our ladies and enjoy delicious Lenten dishes.



For reservations please call:

Aline: 07938 947 204

Seta: 07973 482 969

Aida: 07503 989 897

Khatoon: 07892 919 121

Admission fee £18.00

Children under 12 £10.00

Includes soft drinks and water.

Why should I support my Church?

The following appeared in the last Armenian Church Bulletin issued by the Diocese. It should concern all of us individually. Please read and consider your position.

At the annual meeting of the Armenian Church Trust (ACT) on Monday 2 December, the activities of the Armenian Church in the United Kingdom were presented, many of which have been described in previous bulletins. **One point that became clear was the increased scope and depth of the programs was made possible by the resources and opportunities of the new Arachnortaran guided by the Bishop and his active supporters.**

It was not a solo speech by the Bishop: those involved with the youth activities, Bible Studies, the Street Festival and lectures participated with their aspirations for the future. **Truly, our church is active and broadening its mission.**

There is, however, a negative aspect to this success that all community members should be aware of. **The Armenian Church Trust (ACT) is running a significant deficit amounting in the last accounts to £35,000. All this is only possible with the right level of funding.**

Currently reserves are being drawn but this cannot continue. Either the right level of financial support is forthcoming or the program has to be cut down significantly.

The situation is not confined to the overall diocesan level: it affects the individual parishes as well. Currently, the two London parishes have between them only less than 400 parishioner members whose annual dues have to support all their activities including church services. They too are having difficulties maintaining their work, let alone expand it. The 400 is such a small proportion of the community with a size of 14,000.

There is a prevailing view over many years that rich benefactors and trusts will give the necessary monies. That might have been true at one time, but no longer: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations. **It is vital that the community does participates with their time and money to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.

Firstly, please become a parishioner for one of the churches who will appreciate the generosity of your regular dues. Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

Secondly consider giving additional donations either to the parish or the ACT to sustain a thriving church in all its aspects. Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

This is an issue for all the community and should not be avoided. Thank You

Please ask at St Yeghiche Church Desk for a copy of an application to register with our Parish.

Announcement

Time table for Lenten Vigils and Dinners for 2020 starting at 6pm;

- **March 6** @ St Sarkis Church prepared by Primates Ladies Committee.
- **March 13** @ St Yeghiche Armenian Church prepared by Saturday Armenian Language School.
- **March 20** @ St Yeghiche Armenian Church prepared by St Yeghiche Ladies Guild.
- **March 27** @ St Sarkis Church prepared by St Sarkis Ladies Guild.
- **April 3** @ St Yeghiche Armenian Church prepared by Armenian Relief Society.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

There are no Memorial Service request for this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Զաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Բահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.